

<b>Անվանում</b>	<b>Վարկ ուսանողներին վարկային գործիքի տեղեկատվական ամփոփագիր</b>
<b>Տեսակ</b>	սպառողական
<b>Նպատակ</b>	ուսման վարձի վճարում
<b>Գումարի չափ/միջակայք</b>	առավելագույնը 4,000,000 դրամ՝ ուսումնառության ողջ ընթացքում, առավելագույնը 5 մասնաբաժնով (յուրաքանչյուր ուս. տարվա համար մեկ մասնաբաժին), ընդ որում յուրաքանչյուր մասնաբաժնի գումարը՝ չի կարող գերազանցել 800,000 դրամը կամ մեկ ուսումնական տարվա վարձի չափը
<b>Արժույթ</b>	ՀՀ դրամ
<b>Ժամկետ</b>	առավելագույնը 10 տարի (բայց ոչ ավել, քան ուսումնառության ավարտից հետո 6 տարի)
<b>Վարկի անվանական տոկոսադրույք</b>	9%
<b>Վարկի փաստացի տոկոսադրույք</b>	մինչև 9.4%
<b>Փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգ</b>	$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$
<b>Անվանական տոկոսադրույքի փոփոխման կարգ և պայմաններ՝ նախատեսելու դեպքում</b>	չի սահմանվում
<b>Պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկ և դրանց չափ/միջակայք</b>	չի սահմանվում
<b>Երրորդ անձանց կողմից մատուցվող օժանդակ ծառայություններ</b>	չի սահմանվում
<b>Մարումների հաճախականություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>ուսումնառության ընթացքում մարվում են միայն տոկոսներ (առավելագույնը 5 տարի)</li> <li>ուսումնառության ավարտից հետո ամսական անուիտետային մարումներ</li> </ul>
<b>Վարկի հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները</b>	<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ ոչ ռեզիդենտ Ֆիզիկական անձ</li> <li>- բացասական վարկային պատմության առկայություն</li> </ul>
<b>Մարումների եղանակ</b>	անուիտետային
<b>Ապահովության (գրավի) տեսակ</b>	<b>ուսանողի ծնողներից մեկի երաշխավորություն/ եթե վճարունակ չեն նաև այլ վճարունակ անձի երաշխավորություն/</b>
<b>«վարկ հարաբերած գրավի</b>	չի սահմանվում

<sup>1</sup> որտեղ  $i$  – տարեկան փաստացի տոկոսադրույքն է,  $A$  – սպառողին տրամադրվող վարկի գումար,  $n$  – սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համար,  $N$  – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի համար,  $K_n$  – սպառողի կողմից վարկի ստացման պահին և(կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝  $n$ -րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ),  $D_n$  – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել կրեդիտի ստացման օրից մինչև կրեդիտի գումարի հերթական՝  $n$ -րդ մարման օրը ներառյալ

<b>արժեք»</b>	
<b>Ապահովագրության պահանջի առկայություն</b>	չի սահմանվում
<b>Նվազագույն կանխավճար /արժեք</b>	չի սահմանվում
<b>Տույժերի կիրառման դեպքերը և չափը</b>	Միանվագ տույժ ժամկետանց տոկոսագումարի 4%-ի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանցման դեպքում
<b>Վարկի գումարի տրամադրման եղանակներ</b>	անկանխիկ
<b>Վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերը և պայմանները</b>	առանց սահմանափակումների
<b>Վարկի ձևակերպման վայր</b>	Բանկի մասնաճյուղեր
<b>Որոշման կայացման և որոշման մասին տեղեկացնելու առավելագույն ժամկետ</b>	1 աշխատանքային օր
<b>Վարկը սպառողին տրամադրելու կարգ և ժամկետ</b>	անկանխիկ, 1 աշխատանքային օր
<b>Դրական որոշման գործոններ</b>	-ՀՀ ռեզիդենտ Ֆիզիկական անձ -պետական և պետական հավատարմագրություն ունեցող ԲՈՒՀ-երի բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի ուսանողները · բացասական վարկային պատմության բացակայություն
<b>Բացասական որոշման գործոններ</b>	-ՀՀ ոչ ռեզիդենտ Ֆիզիկական անձ - բացասական վարկային պատմության առկայություն - եկամուտների բացակայություն
<b>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ</b>	· դիմում · անձնագիր, սոցիալական քարտ · առկայության դեպքում ամուսնության վկայականի պատճեն /ոչ պարտադիր/ · տեղեկանք ԲՈՒՀ-ից (ԲՈՒՀ-ի ուսանող լինելու, առաջադիմության վերաբերյալ) · հարցում ԱՔՌԱ վարկային բյուրո (անվճար), · երաշխավորի անձնագիր, սոց. քարտ, աշխատանքի վայրից տեղեկանք, հարցում ԱՔՌԱ վարկային բյուրո (անվճար) · այլ փաստաթղթեր ըստ բանկի պահանջի